Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգերի զինծառայողների, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության համակարգի փրկարարական ծառայողների պարենային ապահովության կարգը հաստատելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի նոյեմբերի 11-ի N 706 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1456-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման վերնագրից, 1-ին կետի 4-րդ ենթակետից, N 4 հավելվածի վերնագրից և 1-ին կետից հանել «տարածքային կառավարման և» բառերը.

2) որոշման N 3 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ N 4 կետով.

«N 4. ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻՑ ԴՈՒՐՍ ՏԵՎԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆԸ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄՆՆԴԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՕՐԱԿԱՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ

NN ը/կ	Սննդամթերքի անվանումը	Մեկ մարդուն օրական հասանելիք մթերքի քանակը (գրամ)
1.	Պաքսիմատ՝ բանակային կամ	300
	Հաց՝ ցորենի այլուրից, 1-ին տեսակի	470
2.	Մսի պահածո	350
3.	Մսաբուսական պահածո՝ տարբեր	500
4.	Շաքարավազ	50
5.	Թեյ	3
6.	Ջեմ	45

1. Պետության հաշվին տվյալ չափաքանակներով սնունդը տրամադրվում է հիմնական ծառայության վայրից դուրս հասարակական կարգի պահպանությանը և հասարակական անվտանգության ապահովմանը 8 և ավելի ժամ անընդմեջ տևողությամբ ծառայության ներգրավված ոստիկանության ծառայողներին:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: